

ԱՐՏԱԿԱՐԳ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

Արտակարգ դատարանը պետության հատուկ պատժիչ մարմին է, որը ստեղծվում է արտակարգ իրադրությունների՝ պատերազմի, պետական հեղաշրջման, կոնկրետ հանցագործությունները քննելու և նմանատիպ այլ դեպքերի ժամանակ: Արտակարգ դատարաններն ոչ մի աղերս չունեն իրավական, ժողովրդավարական պետության հետ և վերջիններիս «մայր օրենքով»՝ Սահմանադրությամբ, արգելվում է նման դատարանների ստեղծումը:

Հայաստանի Հանրապետությունն ,իրեն հռչակելով ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն, բացառել է նման դատարանի գոյությունը: Այսպես, ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ **«Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է»:**

Եթե վերլուծենք «արտակարգ» բառը այն նշանակում է սովորականից դուրս, բացառիկ, կարգից դուրս¹: Հենց այս համատեքստում արտակարգ դատարանն էլ համարվում է կարգից, օրենքից դուրս ստեղծված դատարան:

Կարծիք կա, որ արտակարգ դատարանները ստեղծվում են պետության դատական համակարգից դուրս և իրականացնում են ոչ թե արդարադատություն, այլ բռնազավթում են դատական իշխանությունը²:

Սույն թվականի հունվարի 12-ի լուսաբացին Գյումրի քաղաքում տեղի ունեցած ոճրագործությունից հետո, երբ հրազենի կրակոցից սպանվել էին ընտանիքի 6 անդամները, իսկ ընտանիքի փոքր անդամը՝ 6 ամսական տղան վիրավորվել էր սվինի հարվածներից և 7 օր անց գիտակցության չգալով մահացել հիվանդանոցում, կարծես թե Հայաստանում արտակարգ դատարան ստեղծելու «պահանջ» էր առաջացել: Մասնավորապես, քննարկվում էր նոր միջազգային պայմանագրի կամ 29.08.1997թ. կնքված «ՀՀ-ի տարածքում ռուսական ռազմական բազայի գտնվելու հետ կապված գործերով իրավասության և փոխադարձ իրավական օգնության հարցերի վերաբերյալ» համաձայնագրում

¹ Արդի հայերենի բացատրական բառարան, Էդուարդ Աղայան: «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976թ. առաջին հատոր, էջ 143

²http://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3_%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6

լրացում կատարելու եղանակով կողմերի միջև սահմանել փոխադարձ ընդունելի օբյեկտիվ կանոններ՝ իրավիճակային քրեական գործեր քննելու նպատակով:

«Վաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, որպես իրավիճակային լուծում, առաջարկեց ստեղծել համատեղ դատարան, որը պետք է ձևավորվի կոլեգիալ կազմով՝ մեկ կամ երկու դատավոր հայկական կողմից, մեկ կամ երկու դատավոր ռուսական կողմից: Ըստ այդ առաջարկի՝ հայկական իրավազորության ներքո կատարված հանցագործության մեջ անձի մեղավորության հարցը և պատիժը որոշելու են դատական կազմի հայկական կողմի դատավորները՝ հայկական օրենքների հիման վրա, իսկ ռուսական իրավազորության ներքո կատարված հանցագործության մեջ անձի մեղավորության հարցը և պատիժը որոշելու է դատական կազմի ռուսական կողմի դատավորները՝ ռուսական օրենքների հիման վրա:

Իրավաբանների մի մասը համակարծիք էր վերը նշված առաջարկի հետ, իսկ մյուս մասի կարծիքով նման դատարանն արտակարգ դատարան է, ինչն արգելված է «Սահմանադրությամբ: «Երկու կողմերից կազմված դատարանն իր բնույթով արտակարգ դատարան կհամարվի, հետևաբար սահմանադրության ուժով նման դատարանի կազմավորումն ուղղակի անհնար է, թեկուզ դա նախատեսվի միջազգային պայմանագրով», -նշում է փաստաբան Գուրգեն Հարությունյանը:

Որպեսզի ստեղծվող դատարանը չհամարվի արտակարգ, Արա Զոհրաբյանն առաջարկեց այն չստեղծել կոնկրետ գործով և գտնել այնպիսի լուծումներ, որպեսզի դատավարական կանոնները համապատասխանեն որոշակիության, կանխատեսելիության և հասանելիության չափանիշներին և այլն, ինչի պարագայում նման դատարանը չի համարվի արտակարգ:

Հայաստանում գործում են ընդհանուր իրավասության, վարչական, վերաքննիչ քաղաքացիական, քրեական և վարչական դատարաններ, ինչպես նաև Վճռաբեկ դատարան, իսկ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը: Սակայն, պետության գոյության տարբեր ժամանակահատվածներում, կախված երկրում տիրող

քաղաքական իրավիճակից, կամ՝ կոնկրետ հանցագործությունների բնույթից, Հայաստանում գործել են արտակարգ դատարաններ:

1920 թ. Նոր Բայազետում Մայիսյան ապստամբությունների ժամանակ, Հայաստանի առաջին Հանրապետության նախարարների խորհուրդն իրավիճակից ելնելով ընդունել է ժամանակավոր օրենք՝ «Արտակարգ դատարանի մասին»: Ըստ այդ օրենքի՝ արտակարգ դատարաններ են հիմնվել Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Նոր Բայազետում և Դիլիջանում: Հենց այդ արտակարգ դատարանի կողմից կայացված դատավճիռներով ապստամբության կազմակերպիչներից և առավել ակտիվ մասնակիցներից Գրիգոր Դադիկյանը, Բեգլար Մինասյանը, Սրապիոն Վարդանյանը, Ադիբեգ Նալբանդյանը և այլք ենթարկվեցին մահապատժի³:

Արտակարգ դատարաններ գոյություն են ունեցել նաև այլ երկրներում: Օրինակ՝ 2001 թ.-ին Կամբոջայի Ազգային ժողովն օրենքով ստեղծել էր արտակարգ դատարան՝ նպատակ ունենալով քննելու 1975-1979թթ. բռնապետական ռեժիմի ժամանակ 1.7 միլիոն մարդու սովից, խոշտանգումներից, հարկադիր աշխատանքի ժամանակ մահացածների դեպքերի առիթով հարուցված քրեական գործերը⁴:

Ակնհայտ է, որ թե 1920թ. Հայաստանում և թե 2001թ. Կամբոջայում արտակարգ դատարանները ստեղծվել են կոնկրետ քրեական գործեր քննելու նպատակով: Այստեղ չեն գործել դատավարական կանոնները՝ ոչ որոշակիության, ոչ կանխատեսելիության և ոչ էլ հասանելիության չափանիշների մասով: Այսօրվա իրավական դաշտը Հայաստանին ոչ միայն հնարավորություն չի տալիս ստեղծել նման դատարաններ, այլև ուղղակի արգելում է:

ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհրդի անդամ
փաստաբան Գրիշա Բալասանյան

³ Տես՝ Համլետ Հարությունյան, 1920թ. Մայիսյան ապստամբությունը Նոր Բայազետ գավառում աշխատությունը, էջ 89, <http://hpj.asj-oa.am/5702/1/2011-3%2877%29.pdf>

⁴ <http://www.eccc.gov.kh/en/about-eccc/introduction>